



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2020 թվականի թիվ 10-Ա

ք. Երևան

#### «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2020 թվականի հունվարի 21-ին հարուցված թիվ 1 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

2020 թվականի հունվարի 21-ին Հանձնաժողով մուտքագրված «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Իրավատեր) դիմումում նշված է հեռուստառադիոընկերության կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից խախտում կատարելու փաստի վերաբերյալ: Ըստ Իրավատիրոջ՝ Ընկերությունը առանց հեռուստաընկերության վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագիր կնքելու հեռարձակում է «Կենտրոն» հեռուստաընկերության հաղորդումները:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով՝ 2020 թվականի հունվարի 21-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2020 թվականի հունվարի 22-ին ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հանձնաժողովը ներկայացրած գրավոր բացատրությունում Ընկերությունը հաստատել է այն փաստը, որ Ընկերության և Իրավատիրոջ միջև չկա կնքված հեռուստաընկերության վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագիր, սակայն նշել է նաև Ընկերության կողմից չի վերահեռարձակվում «Կենտրոն» հեռուստաընկերության հաղորդումները: Բաժանորդներն այդ հեռուստաընկերությունը կարողանում են դիտել T2 թվային սարքերի միջոցով:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 45.1-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ

կաբելային (մալուխային) հեռուստառադիոհեռարձակման դեպքում նաև հեռուստառադիոընկերությունում տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2020 թվականի փետրվարի 01-ի թիվ 1-Ա հրամանը՝ իրականացրել է Ընկերությունում մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Տեղում դիտարկման արդյունքում արձանագրվել է, որ Ընկերության կողմից «Կենտրոն» հեռուստածրագրի հաղորդումները չեն վերահեռարձակվում:

***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի տեղում դիտարկման արդյունքներին և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի խախտում չի հայտնաբերվել:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ Ընկերության և Իրավատիրոջ միջև չկա կնքված հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագիր, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով Ընկերության նկատմամբ հարուցված թիվ 1 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված հեռուստառադիոընկերություններն օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների ծրագրերը կարող են վերահեռարձակել պայմանագրային հիմունքներով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով հեռուստառադիոհեռարձակում իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող ընկերությունների հեռուստառադիոծրագրերը հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահեռարձակվել միայն Հանձնաժողովի թույլտվության հիման վրա:

Թույլտվությունը տրվում է, կամ դիմումը մերժվում է վերահեռարձակում իրականացնելու համար Հանձնաժողովին դիմելուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Կարճել «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 1 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

14 փետրվարի 2020թ.  
ք. Երևան